ՀԳՈՒՇԱՑՈՒՄ ՍԻԼԻԿՈԶԻ ՄԱՍԻՆ

# ՔՎԱՐՑ ՔԱՐԻՑ ՊԱՏՐԱՍՏՎՈՂ ՍԵՂԱՆԱԾԱԾԿԵՐԸ ԿԱՐՈՂ ԵՆ ՎՆԱՍԵԼ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆԸ

## ՍԻԼԻՑԻՈՒՄԻ ՔԱՆԱԿԸ ՍԵՂԱՆԱԾԱԾԿԵՐՈՒՄ*



**ՔՎԱՐՑ, ՔՎԱՐՑԻՏ՝ 95%**



**ԿԵՐԱՄԻԿԱ՝ 45%**



**ԳՐԱՆԻՏ՝ 45%**



**ԲԵՏՈՆ՝ 30%**



**ԾԵՆԱՊԱԿԻ՝ 18%**



**ՄԱՐՄԱՐ 5%**



**ՓԱՅՏ, ԼԱՄԻՆԱՏ, ՊԻՆԴ ՄԱԿԵՐԵՍՆԵՐ՝ 0%**

## ՔԻՉ ՍԻԼԻՑԻՈՒՄ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ ՍԵՂԱՆԱԾԱԾԿԵՐԻ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐ՝ ՔՎԱՐՑԻՑ ՊԱՏՐԱՍՏՎԱԾԻ ՓՈԽԱՐԵՆ

- Քվարցը, որը հայտնի է նաև որպես արհեստական քար, տարածված է իր մատչելիության և դիմացկունության շնորհիվ: Այս քարից սեղանածածկերը (countertop) կարող են պարունակել ավելի քան 90% բյուրեղային սիլիցիում:
- Մեծ տարածում է ձեռք բերում քվարցիտը, և չնայած այն բնական է՝ դարձյալ պարունակում է մեծ քանակությամբ սիլիցիում:



- Արտադրական աշխատանքները, ինչպիսիք են կտրելը, հղկելը և փայլեցնելը, օդ են արտանետում սիլիցիումի փոշի: Երբ աշխատողները շնչում են այս փոշին, նրանց մոտ կարող է առաջանալ սիլիկոզ՝ մահացու թոքային հիվանդություն:
- Տեղադրվելուց հետո քվարց քարից պատրաստված ապրանքները սպառողների համար որևէ հայտնի առողջական վտանգ չեն ներկայացնում:

Խոսեք ձեր շինարարական աշխատանքների ղեկավարի, ինտերիերի դիզայների կամ ցուցասրահի ներկայացուցչի հետ այն տարբերակների մասին, որոնք կարող են փոխարինել մեծ քանակությամբ սիլիցիում պարունակող քվարցից ապրանքներին: Կան սեղանածածկերի այլ տարբերակներ ևս, որոնք քիչ սիլիցիում են պարունակում կամ ընդհանրապես այն չեն պարունակում և նույնքան գեղեցիկ ու մատչելի են:

*Այս տոկոսները մոտավոր են. խնդրում ենք կարդալ ապրանքների անվտանգության տվյալների թերթիկը՝ պարունակվող սիլիցիումի և անվտանգ օգտագործման ցուցումների համար:
https://www.worksafe.vic.gov.au/duties-manufacturers-and-suppliers-crystalline-silica-substances

ՀԱՎԵԼՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՅՑԵԼԵՔ՝

Cal/OSHA'-ի «Սիլիցումի հետ աշխատեք անվտանգ կերպով» էջ՝
worksafewithsilica.org

Լոս Անջելեսի Շրջանի Հանրային Առողջության Վարչություն՝
ph.lacounty.gov/silicosis

COUNTY OF LOS ANGELES Public Health

(Armenian)